ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2013թ. թիվ 295-Ա

Ս. ԹՈՒՆՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111 հոդվածի 1-ին կետի և 130 հոդվածի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Սաթենիկ Թունյանին ս/թ նոյեմբերի 19-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Ձիլիզայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2008 թվականի նոյեմբերի 13-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Ձիլիզայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Սաթենիկ Թունյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. նոյեմբերի 19
ք.Վանաձոր